

### ՅՈՒՐԵՆԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

#### ԵԱՏԱՅԻ, ՀԱՅՏԱՅԻ ԵՒ ԱՄՄԱՆԻ ՄԷՋ

Նորին Ամենապատուութեան եւ Կեդրոնական Յանձնախումբի կարգադրութեամբ, Պալեստինի մեր գլխաւոր բնմերուն մէջ եւս կազմուեցան սեղական յանձնախումբեր եւ եղան յօբելիմական հանդէսներ եւ ճուրախաւաւորութիւններ ի նպաստ Անթիլիասի:

#### Ս Օ Տ Ա

Յօբելիմական հանդէսը սեղի ունեցաւ Ս. Գլխադիր վարժարանի սրահին մէջ, Օգոստոս 24ին, յ. մ. ժամը 5ին, ի ներկայութեան Նորին Ս. Օծուրեան եւ կոկիկ բազմութեան մը:

Հանդէսը բացաւ Հոգ. Տ. Բարգէն Վրդ. Ապասեան, գեղեցիկ կերպով վեր հանելով հանդէսին նպատակը եւ Ն. Ս. Օծուրեան զերը մեր ազգային կեանքի եւ մշակոյթի պատմութեան մէջ:

Պ. Թորոս Երեւեկեան հիացական խօսքերով վեհափառին կենսագրականը բրաւ, սպասուելով բոլորը, համեմելով իր խօսքը վեհափառի կեանքին մանրադէպերով:

Հոգ. Տ. Նղիժեհ Վրդ. Տրեքեան վերլուծեց վեհափառին գործը, մասնաւեցելով այն արժեքները որոնք կուզան աւելնալու մեր մասենագրական ու ազգային արժեքներու վրայ:

Հոս եւս եղան պատեան երգեր եւ արասանութիւններ, եւ ապա սեղի ունեցաւ նուիրահաւաքման գործը եւ սեղւոյն վրայ գոյացաւ 175 Պ. Ոսկի:

#### Հ Ա Յ Տ Ա

Կիրակի, Օգոստոս 31, երեկոյեան ժա-

մը 7ին Հայաստանի մեր ժամասան բակին մէջ սեղի ունեցաւ երրորդ յօբելիմական հանդէսը, դարձեալ ի ներկայութեան Նորին Ս. Օծուրեան եւ ընտիր բազմութեան մը:

Բացման խօսքը րբաւ եւ Ն. Ս. Օծուրեան կեանքին եւ գործունեութեան մասին արսայայտուեցաւ սեղւոյն Հոգ. Հովիւ Տ. Շաւարտեան Վրդ. Գուրգենեանը, իսկ Վեհ. Ի մասենագրական վաստակին գնահատանը րբաւ Տօբ. Թօրեան: Վեհափառը քի Յամայի եւ քի Հայաստանի մէջ խօսեցաւ իր ամենէն արագին եւ խրատուսիչ խօսքը: Անգրադառնալով մեր պատմութեան, մեր մասենագրական արժեքներու գնահատման եւ իր գործին, շնորհաւոր յիշիկական ստեղծելու իր մէծ իտեպիւն: Հոս եւս ձեռնարկուեցաւ նուիրահաւաքման, եւ սեղւոյն վրայ գոյացաւ 210 Պ. Ոսկի:

#### Ա Մ Մ Ա Ն

Ամանի մեր փոքրիկ գաղութը եւս բերաւ իր մասնակցութիւնը: Կիրակի, 31 Օգոստոսին Գեր. Տ. Դերեմիկ Եպիսկոպոս եւ Հոգ. Տ. Յարութիւն Աբեղան հոն գացին եւ սեղւոյն Տեղական Մարմնի մասնակցութեամբ հանդիսարեցին վեհափառին Յոբելեանը, գոյացնելով շուրջ 150 Պ. Ոսկի:

Սէն յանուն Ն. Ամենապատուութեան եւ Վեհ. Կարողիկոսի կը յայտնէ արագին ճնորհակալութիւն բոլոր անոնց՝ որոնք իրենց բարոյական եւ ներքական աջակցութիւնը բերին Յօբելիմական հանդէսին եւ զայն թելադրող հիմնական գաղափարին: